

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ Ր Ա Ս Օ Ս Ա Կ Ա Ն

Մ Ի Խ Ո Ս Ե Ր Ո Ս Ա Ս Ե Գ Ի Ն Ն Ե Ր—
Մեր գաղթը, Ա. տարի. պատկերազարդ ձե-
սագիր այբբենական և ընթերցան առաջա-
գրական ձևազարդ օրինակներով. Քիֆիդ-
այ ձևով. 1913. 80 էջ, գինը՝ 25 կ. Երե-
րում է հայ գրքերի գինով 1500 ամսակի և ար-
պող ութնան 400 ամսակի տարեկարգին:

Այս նոր գրագիրը ձգտում է գո-
հացում տալ դասաւանդութեան նորա-
գոյն պահանջներին: Աւարդ՝ այբու-
բենական մասը կարգուած է ձեռագիր
օրինակներով և համեմատաբար փոքր
տեղ է բռնում (23 էջ): Գլխագիր և
փոքրատառ այբուբենը ամբողջովին
անցնելուց յետոյ է, որ աշակերտներն
այս գրագիրով պիտի սովորեն տղա-
գիրը ճանաչել ու կարգաւ: Տղագիր
այբուբենի վարժութիւնները, որ ըն-
թանում են ձեռագրին զուգահե՛ս՝ նոյն-
պէս մեծ տեղ չեն բռնում. ընդամենը
10 էջ: Բայց ձեռագիր վարժութիւն-
ները ուղղահայեաց գրութիւն ունին.
Վերջերս այդ տեսակի գրութեան սկսել
են առաւելութիւն տալ: Աւարդ՝ դա-
սագրում ձեռագիր և տղագիր հատ-
ւածները համարեա կէս առ կէս են,
այս տարբերութեամբ միայն, որ սկզբ-
ում բացառապէս իշխում է ձեռագիր
ըլը, իսկ վերում զ՝ բակչում է տղա-
գիրը: Ընթերցանութեան հատուածնե-
րից՝ շատերը գրուած են ձեռագրով,
որ ըստ կրնայաւած արտագրութեան,
իկողորմեան և վայելչագրութեան
գրոմին: Այդ ձեռագիր յօդուածները
աւելորդ են զարձնում արտագրութեան
և թելադրութեան յատուկ օրինակնե-
րի գործածութիւնը՝ գոնէ առաջին
տարին:

Դասագրքի կազմողները զմի խումբ
ուսուցիչները լինելով աշխատել են
ազուակ իրենց փորձառութիւնից. և
իսկապէս գրագրքի մէջ ոչ այնքան
տեսական մանկավարժների սխտանա-
մտութիւն է նկատուած, որքան գործ-
նական մանկավարժների դիտողութեան
ու փորձի ազդիւնը: Դասագրքին առա-
տարին պատկերազարդութեամբ է՝ բառ ու
պատկեր իրար հետ կապելու ձգտու-
մով: Յօդուածներ և օրինակներ լե-
զուի ու բովանդակութիւնը ընդհանուր
ամամբը պարզ է և մատչելի մանուկ-
ների հակազդողութեան: Փորձը ցոյց
կը տայ թէ՛ որքան նետաքթբական է
հատուածները բովանդակութիւնը, որով-
հետև մանուկների ճաշակն ու պահանջ-
ները տարբերուած են մեծերի ունեցա-
մից: Յամենայն զլպս բոլոր հատուած-
ների մէջ պահպանուած է մի ընդհա-
նուր յասակութիւն, որ կարող է յաջ-
ութեան գրուական լինել: Եկարտ-
գրութիւնն ու իրատու աննշան տեղ
կեն բռնում, զործագրութիւնն՝ առաջնա-
կարգ: Մանուկները, որ առողջ բնազդ
ունեն, սիրում են զործերն աւելի, քան
մտքերն ու շատախոսութիւնը:

Ընթերցարարի հատուածները մանր
են, ինչ որ մի առաւելութիւն պէտք է
նկատել, քանի որ կարելի է մի գա-
տում լինաւ աւանդի տրուած նիւթը:
Յօդուածները դասաւորուած են ըստ
եղանակների: Յօրինողները զրոնով
ձգտել են գոհացում տալ դասաւու-
թեան այն պահանջին, որով աւան-
դած նիւթերը պէտք է համապատաս-
խան լինեն աւանդման ժամանակին:
Մի ժամանակ և ֆրանսական դասա-
գրքերից շատերում մինչև այսօր՝
յօդուածները յարմարեցնում էին հինգ
դասարաններին, այսօր տարւոյ
եղանակներին համապատասխան դասա-
ւորութիւն են տալիս: Մենք չենք
մտնում այս համակարգի բնութեան
մէջ, մենք ուզում ենք միայն
տեսլ, որ յօդուածների դասաւորութեան
մէջ որոշ կարգ կայ պահպանուած:

Ընթերցողները, որ մինչև յունւար
աշակերտները վերջացրած կը լինին
դասագրքի այբբենական մասը, ըն-
թերցարարն սկսում է ձման եղա-
նակին յարմար նիւթերով:

Բայց յօրինողներն այնուհետև դրել
են մտացած երեք եղանակներին յար-
մարտած նիւթեր, որ նշանակուած է
թէ ամբար և աշնան նիւթերը երեքա-
նիւր պէտք է անցնեն զարնան սկզբ-
նիւր ու վերջերին, ինչ որ խոստումն
է ընդունուած սկզբունքի: Մեր կարծի-
քով դասաւանդութեան առաջին տա-

րին կարելի է գոհանալ ձման և
զարնան նիւթերով, աշնան և ամառն
նիւթերը թողնելով երկրորդ տարւոյ
առաջին կիսին, եթէ յօրինողները մեծ
նշանակութիւն են տալիս պարագ-
մուծներին նոյնժամէն: Երկու սկզբուն-
քին:

Այս դասագիրը ունենալով մտկա-
վարժական առաւելութիւններ, անթե-
րի է լեզուական և հմտութեան կրկին
տեսակներէրց: Վարժութիւնների մէջ
դասաւում են այնպիսիները, որ ան-
կարելի է յաջող համարել: Օրինակ կը
Յ կարգում ենք. «Ընթանի կատունը կը
տաս կուտի պատի տակ, սպաս կուտի
պատի տակ, սպաս կուտի, սպաս կու-
տի, պաս ու ուսին պաս կուտի, այս
հատուածը գուցէ վատ չէ իբրև վար-
ժութիւն, բայց իբրև բովանդակու-
թիւն ու լեզու անյաող է և մինչև
իսկ անիմաստ: Անմիջապէս զրու տակ
կարգում ենք. «Ճուղին տաս մը կանգն»: Շատերը
նկատած կը լինեն, թէ ինչ-
պէս երեխաները դժարութեամբ սո-
վորում են բառերն իրար կցել, նա-
խորդի բաղաձայնը յաջորդի ձայնա-
ւորի հետ արտասանելով: Վերջ բեր-
ւած օրինակը նրանց աւելի յամտակ
պիտի տայ իրենց յոռի արտասանու-
թեան վրայ: Հետեւալ էջում եղանակ
ուղուած են շարքը ամանից, որ այն-
տեղ սպիտի և ուտիս. արքը կզուն ու-
տեցնելը չպէտք է սիրող նշան համա-
րել և եթէ այդ հակումը լինի իսկ երե-
խաների մէջ, պիտի արմատախիլ անել:
Հետեւալ վարժութիւնը, որ լուսնին է
վերաբերում, նոյնպէս անյաող է, ինչ-
պէս և յաջորդը, որ շուն ու կատու սի-
րով ընկերներ են երևում, ինչ որ հակա-
ռակ է իրականութեան: Դրանից յե-
տոյ կեղծ վարժութիւնը մտք է բու-
տական. յատկապէս այն խօսքը թէ՛
«Ճեր շուն տան է, սա (էջը) մէջը»:
Եւ 12-ում նաեւ իր թոռանն անու-
նում է «ուրուր». որքան զիտեց
ուսու մամիկներն են իրենց թոռներին
ՕՕՔՕՅՅ անուանում, մենք գոնէ նման
փոքրաշունք լսած չենք հայ նաեւեղի:
Արօրին վերաբերող վարժութեան մէջ
սակնյայտի սխալներ կան. «Յօրը-շո-
րը վար արած առում են արօրին, որ
մաճկալի ճուշման տակ չպիտի հա-
մարձակի օրօրելի. «Յօրը-շորը ակն
չարի» սուտ են նրան, մինչդեռ ա-
կունների ուղիղն է զեղբայրակն ու
ցանկալին: Հետեւալ հատուածում ձիւր
կուլում է «ճուրճան», որ աւելի
վկան համար կասեն, քան ծախ: Այդ-
պիսի լեզուական և հմտութեան պա-
կաններ նկատուած են և «Բեղէի եր-
գում» (էջ 19), «Ճուտիկ» մէջ (էջ
21), «Բթցիցի» մէջ (էջ 23), «Ճանի-
րոյր» հատուածում (էջ 25), «Մտի
ճիւղին» վարժութեան մէջ կարգում
ենք (էջ 27), որ ստիպել բուն է նի-
տել ու «Կիսի արել ծառի գայար ճիւ-
ղերից»: Հմտութեան պակաս. արեւա-
զարձայն երկրներում միայն կարելի
է հանդիպի թռչունների, որոնք կար-
ւած ընել են չինում: 29 էջում կար-
գում ենք. «Կարգի Իսակ, Սիսակ,
Միսակ, զըտ-պըտուրիկ իրար տե-
տակ», որի միտքը պարզ է անշուշտ
միմիայն յօրինողների համար: Ընդհա-
նապէս դասագրքի մէջ նկատուելի է
յանդի զերակնութիւնը իմաստի
վրայ, ինչ որ մեծ պակասութիւն
պէտք է նկատել: Նմանապէս և նոյ-
նապէս թառերը հակումն առաջ է բե-
րում անյաող հատուածներ, ինչպէս
«Իտան ու խուրման» (էջ 32), «Ճեյ
վիսիկ» (էջ 36): Մի տեղ (էջ 37) մա-
նուշակը կուլում է «ճուրճան». «ճու-
րաբը», որ պարսկերէն, բառացի նը-
նապէս է «ճոր պտուղ» և չի հար-
բելի ծագիկների համար գործածել
Հայի թէ՛ մանուկները ընթանի կա-
րողանան այսպիսի զիմում աղբիւրին
(էջ 38). «Գու կենք հա նուշում». սա
մի իմաստասիրութիւն և մի ան-
յաող դատկեր է միանգամայն:

Վերջերսարանի հատուածների մէջ
կան յաջողները. բայց պակաս չեն և
անյաողները. այսպէս են մեր կար-
գում «Գաշազակը» (41) «Դեղի զըղ-
րոցը» (42), որ մանուկին արամաղը-
րում է զսաի կէտը առաւտանս պա-
րաստի, «Ճտումէր արէւած» (45), որ
բացատրութեան կարօտ բառեր ու
արտայայտութիւններ ունի և այլն:
Դասագրքում տեղ են գտել մի-եք-
կու ժողովրդական նիւթ ինչպէս «Ուր
գնում» (43), «Էկալուց» (67), «Բիւ-
րեղ» (71), որոնց իմաստը հազիւ թէ
մանուկին են ոչ միայն մանուկներին,
այլ և նրանց ուսուցիչներին: Մեր ժո-
ղովրդական բանահիւտութեան այդ
հատուածները, որ նշարարն զրուած
են կրում, կարօտ են մանրապատում
մեկնութեան: Ընդվրդական նիւթե-
րից պէտք է բնորել ամենամանուկնե-
րները, կամ սրանց բոլորովին մատչե-
լի մշակում տալ:

Չնայած իր պակասութիւններին,
այս դասագիրը մեր կարծիքով կա-
րող է յաջողութեամբ գործ տանել
զօրոցներում: Ընթան և բանիմաց ու-
սուցիչների նկատողութիւնները ուշա-
գրութեան անակով, յօրինողները յե-
տագոյ պապարտութիւններ ժամանակ
կարող են աւելի նմանութեան հանդե-
սերի, քան այս անգամ: Դասագիրը
կազմակերպողները պէտք է գիտակա-
ն և ազգայրական մեծ պարաստութիւն
սենեակ, մանուկների հոգեբանութեան
ժանոթ լինեն նաև տեսականապէս և
զուգորդեն իրար անձնական փորձա-
նութիւնն ու տեսական պարաստու-
թիւնը:

Ն. Ա.